

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

249

Պայմանագիր քայլութերկիրաների, մբացել



L. Ստեփան

ԽՍՀՄ-Ի ՆՈՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ԳԵԴԵՐԱՑԻԱՆ

342(47)
F-55

20.06.1936 • 1936

342(47)

F-55

L. ՔԵՐԻԱ

X09 MAR 2013
05 FEB 2017

ԽՍՏ - Ի
ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵԿԱԿԱՎԱՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

249



ՀԱՅԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

01 MAR 2013

34.687

Ընկ. Լ. ԲԵՐԻԱՅԻ հոգվածը, տպագրված
«ՊրաՎԴԱ» յում 1936 թ. հունիսի 12-ին:

Համեկ(բ)կ կենտրոնական Կոմիտեյի հունիսյան պլե-
նումն ընկեր Ստալինի գեկուցման առթիվ հիմնակա-
նում հավանություն տվեց Խորհրդային Սոցիալիստա-
կան Հանրապետությունների Միության նոր Սահման
նադրության նախազծին, Սահմանադրություն, վորը
համաշխարհային պատմական նշանակություն ունի
ինչպես մեր յերկրի, այնպես ել կոմունիզմի գործի հա-
մար ամբողջ աշխարհում:

ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրությունը հաստատում է
այն մեծագույն անտեսական ու քաղաքական փոփոխու-
թյունները, վորոնք կատարվել են մեր յերկրում Խոր-
հրդային Միության առաջին Սահմանադրությունն
ընդունելուց հետո անցած տարիների ընթացքում:

Այժմ մենք արդեն կարող ենք այդ սոցիալ-տնտեսա-
կան փոփոխությունների հիման վրա, մասսաների ակ-
տիվության ու քաղաքական գիտակցության աճման հի-
ման վրա, մինչև վերջը ծավալել խորհրդային դեմո-
կրատիան, աշխատավորների խսկական դեմոկրատիան:

Մինչդեռ կապիտալիստական պետություններն ըն-
թանում են ֆաշիստական դիկտատուրայի, աշխատա-
վոր մասսաների նույնիսկ ամենատարրական իրավունք-
ների հետազա վոտնահարման ու նրանց այդ իրա-
վունքներից զրկելու ուղիով, խորհրդային պետությու-

3259- 91
Լ. БЕРИЯ
НОВАЯ КОНСТИТУЦИЯ СССР
и
ЗАКАВКАЗСКАЯ ФЕДЕРАЦИЯ
Армпартиздат, Эривань.

3

նըն ընթանում ե ամբողջ ժողովրդի համար իսկական գեմովրատիայի ամենալայն ծավալման ուղիով։ Սրանք են մեր կուսակցության մեծագույն հաղթանակները։ Սրանք են Համբկ(բ)կ Կենտկոմի և մեր կուսակցության առաջնորդ մեծ Ստալինի հանձարեղ ղեկարլարության հաղթանակները։

Սոցիալիզմի հաղթանակները, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության միշտ կենսագործման հետեւանքով, փոխեցին ազգությունների դրությունը Խորհրդային Միության մեջ, փոխեցին նրա ազգային հանրապետությունների գեմքը։

* * *

Նոր Սահմանադրության նախագիծը, վորը հավա-նության արժանացավ Համբկ(բ)կ Կենտկոմի պլենումի և ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի նախագահության կողմից, նախատեսում ե Անդրկովկասյան Ֆեղերացիայի վերացումը և Անդրկովկասի հանրապետությունների՝ Վրաստանի, Ադրբեյջանի ու Հայաստանի մուտքն անմիջականորեն ԽՍՀՄ-ի մեջ։

Այդ առաջարկն ուղղակի կերպով բարեւում ե մեր կուսակցության դիմավոր գծի, մասնավորապես նրա ազդային քաղաքականության հաջողություններից ու հաղթանակներից, վոր հեղափոխության տարիներին սոցիալիստական շինարարության դործում ձեռք են բերվել Անդրկովկասի հանրապետություններում։

Ինչպիսի՞ պայմաններում ե ստեղծվել Անդրկովկասյան Ֆեղերացիան։

ա) աշխատավոր մասսաների և Կարմիր բանակի միացյալ ջանքերով 1920—1921 թվականներին Ադրբե-

ջանում, Վրաստանում և Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն։

բ) Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները ժառանգություն ստացան մենշևկինների, մուսավաթականների և դաշնակների տիրապետության կողմից խպառ ալերգիած հետամնաց անտեսություն։

դ) մենշևկինների, դաշնակների և մուսավաթականների կողմից խմաներիատական խնտերվենտների ուղղակի դիրքեկտիվով Անդրկովկասի ժողովուրդների միջև կարմակերպված արյունալի ընդհարումների հետեւանքները գետ վերացված չելին։

դ) մենշևկինները, մուսավաթականները և դաշնակներն ակտիվ պայքար ելին մղում խորհրդային իշխանության դեմ, հրահրելով ազգային յերկառակությունը։

Անդրկովկասի հանրապետությունների այդպիսի դրությունը խորհրդային իշխանության ստեղծման ու ամրապնդման սկզբնական շրջանում հրամայողաբար պահանջում եր Անդրկովկասի հանրապետությունների համատեղ ջանքերը՝ անտեսական վլուզումը վերացնելու և անտեսությունը բարձրացնելու համար, հատուկ մարմին ստեղծելու համար, «վորը կարողանար կարգավորել փոխարարերություններն ազգությունների միջև» (Ստալին), Անդրկովկասի հանրապետությունների համատեղ ջանքերը՝ մենշևկինների, դաշնակների ու մուսավաթականների հակահեղափոխական կուսակցությունները վերընականապես ջախջախելու համար։

Լենինի և Ստալինի միատեղ առաջարկով 1921 թվականի նոյեմբերի 29-ին ՌԿ(բ)կ Կենտկոմն Անդրբեյրացիա ստեղծելու մասին վորոշում ընդունեց, վորի

մեջ անդրկովկասյան հանրապետությունների Փեղեցրացիան ճանաչեց սկզբունքորեն բացարձակապես ճիշտու իրականացման անպայման յենթակա և առաջարկեց Վլաստանի, Հայաստանի ու Աղբքեջանի կենտրոնական կոմիտեներին լենսագործել այդ վորոշումը:

Կատարելով լենինի - Ստալինի այդ ուղղակի ցուցումները և ՌԿ(Բ)Կ կենտրոմի վորոշումը, Անդրկովկասի բոլցեխները Ս. Որջոնիկիձելի անմիջական ղեկավարությամբ ստեղծեցին Անդրկովկասյան ֆեդերացիան:

Անդրֆեդերացիաի ստեղծումն ու ամրապնդումը, ինչպես հայոնի յե Ընթացավ նացիոնալ-ուկոնիստերի դեմ մզլող պայքարում:

Նացիոնալ-ուկոնիստերը չելին ըմբռնում հեղափոխության զարգացման այն շրջանի ամբողջ յուրահատկությունը և դեմ ելին դուրս դալիս Փեդերացիային:

Նրանք չելին հասկանում, վոր այդ ժամանակաշրջանում Անդրֆեդերացիաի ստեղծումն ու ամրապնդումն Անդրկովկասի հանրապետություններում խորհրդադարին իշխանությունը պահպանելու և ամրապնդելու հարց եր հանդիսանում:

Նացիոնալ-ուկոնիստերը, չհասկանալով Անդրկովկասյան հանրապետություններում խորհրդադարին իշխանությունը պահպանելու և զարգացնելու համար մզվող պայքարի այդ առաջնահերթ խնդիրը, դլորվում ելին վրացական մենչեւիների, հայկական դաշնակների ու աղբքեջանյան մռասավաթականների դիրքերը:

Ստեղծով և ամրապնդելով Անդրֆեդերացիան, Անդրկովկասի բոլցեխները մեծ պայքար մզեցին նա-

յիոնալ-ուկոնիկմի դեմ և ջախջախեցին նացիոնալ-ուկոնիստական ոպողիցիան, վորի մի մասը, ինչպես հայոնի յե, հետագայում անցավ հակահեղափոխական արօգկովմի բանակը:

Նացիոնալ-ուկոնիկմն իրենից ներկայացնում եր աջ ոպորտունիստական մի հոսանք, վորն արտացոլում եր բուրժուական - նացիոնալիստական, մենշևիկյան ու կուլակային տարրերի ճնշումն անդրկովկասյան կուսկագմակերպությունների առանձին միջնաշերտերի վրա:

Նացիոնալ-ուկոնիկմը վրացական հարձակողական շովինիկմի բացահայտ արտահայտությունն եր հանդիսանում, շովինիկմ, վորը փորձում եր Անդրկովկասը դարձնել ազգամիջյան Ընդհարումների յերկիր, ձբգտում եր հարություն տալ մենշևիկյան տիրապետության ժամանակներին, յերբ շովինիստական կատալության մոլուցքի մեջ մարդիկ այրում ու կոտորում էլին միջանց:

Վրացական նացիոնալ-ուկոնիստները ցանկանում ելին ոգտագործել Վրաստանի աշխարհագրական ու տնտեսական առավելությունները, այնպիսի կարեւորագույն հանդուցային կետերին նրա տիրապետելու հետեանքով, ինչպես Թիֆլիսը և Բաթումը: Այդ հիման վրա նրանք պահանջում ելին, վոր Վրաստանը դուրս գա Անդրֆեդերացիայից, ցանկանում ելին արտօնություններ ստեղծել Վրաստանի համար՝ ի հաշիվ Խորհրդային Աղբքեջանի ու Հայաստանի:

Նացիոնալ-ուկոնիստներն աղբարային-դյուղացիան հարցում արտացոլում ելին վրացական աղնաշականների ու կուլակների շահերն ու պահանջները, նրանք պաշտպանում ելին կուլակյին աղբարային

քարդաքականությունը, հանդիսանալով մեր դյուզի զարգացման կապիտալիստական ուղիների մունետիկներն ու դրա համար մարտնչողները:

Նացիոնալ-ռեկլոնիզմի վտանգն այն եր, վոր նա հաղթություն տանելու դեպքում կամրացներ ճորատիրության մնացուկները դյուզում, կամրացներ կուլակության դիրքերը, Վրաստանն ու Անդրկովկասը կվերածեր ազգամիջյան բաղխումների ու արյունալի ընդհարումների թատերաբեմի, կվիթեցներ իմակերիսալիդմի դեմ ուղղված՝ խորհրդային հանրապետությունների միասնական — ինտերնացիոնալ ճակատը, կարձակեր մինչեւիների ու բուրժուական նացիոնալիստների ռեակցիոն ուժերը և դրանով իսկ ճանապարհ կհարթեր իմակերիալիստական ինտերվենցիայի ու կառիտալիդմի վերականգնման համար:

Ուստի և նացիոնալ-ռեկլոնիզմի դեմ մզված պայքարը, Անդրֆեդերացիայի ստեղծման համար մզված պայքարն այդ շրջանում նշանակում եր պայքար՝ Անդրկովկասի հանրապետություններում խորհրդային եշխանությունը պահպանելու ու զարգացնելու համար:

Այդ պատճառով ել Անդրկովկասի բոլշևիկներն այն ժամանակ այնպես անողոքաբար ջախջախում ելին նացիոնալ-ռեկլոնիզմը:

* * *

Միայն Անդրֆեդերացիա ստեղծելով և այդ Փեդերացիան ամրապնդելով եր, վոր Անդրկովկասի բոլշևիկները կարողացան Անդրկովկասի հանրապետություններում հասնել սոցիալիստական շինարարության հսկայական հաջողություններին, վոր մենք ունենք

այսոր և վորոնց համար Անդրկովկասի հանրապետությունները կուսակցության ու կառավարության կողմից պարզեցները լենինի շքանշաններով:

Անդրկովկասի հանրապետությունները — «Ռուսաստանից ավելի զյուղացիական» (Լենին) այդ յերկիրներն այժմ վեր են ածվել ինդուստրիալ-ազգարային հանրապետությունների։ Առաջին հնդամյակի պլանն Անդրկովկասի հանրապետություններում կատարվեց հաջողությամբ և ժամկետից չուտ։ Հաջողությամբ ե կատարվում յերկրորդ հնդամյակի պլանը։

Խորհրդային իշխանությունն Անդրկովկասի հանրապետություններում հզոր ինդուստրիա ստեղծեց։ Աճեց Արբեկջանի նավթարդյունաբերությունը։ Վրաստանում աճեցին մանգանի, ածխի, լեռնա-հանքային և արդյունաբերության այլ ճյուղեր։ Քիմիական ու պղնձի արդյունաբերության խոչը ձեռնարկություններ են կառուցվել և կառուցվում են Հայաստանում։

Արդյունաբերության համար ստեղծված ե եներդետիկ հզոր բազա։ Ստեղծված են արդյունաբերության մի շարք միանգամայն նոր ճյուղեր։

Արդյունաբերության սեսակարար կը ուն Անդրկովկասի հանրապետությունների ընդհանուր ժողովրդական տնտեսության մեջ արդեն հասել և 72 տոկոսի։

Հսկայական հաղթանակներ են ձեռք բերված դյուզատնեսության սոցիալիստական վերակառուցման դործում։ Դյուլացիական տնտեսությունների մոտ 80 տոկոսը կազմակերպված են կոլտնտեսություններում։ Կոլտնտեսային կյանքի ստալինյան կանոնադրության հիման վրա վերջին տարիների ընթացքում ամրացել են կոլտնտեսությունները, աճել ե կոլտնտեսա-

կանների ունեոր կյանքը։ Հսկայական աշխատանք ե կատարված հատուկ ու տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, թեյի, ցիտրուսների, խաղողի, ծխախոտի, թունդի ծառի և այլնի զարգացման ուղղությամբ։ Կատարվել և կատարվում են ցամաքեցման ու վուրզման խոչոր աշխատանքներ (Կոլխիդա, Մուղան, Ալաղան, Ղաբ և այլն)։

Գյուղատնտեսության համար ստեղծված ե տեխնիկական հզոր բազա։ Ստեղծված են մեքենա-տրակտորային կայաններ, կոլտնտեսային զաշտերում աշխատում են կոմբայններ, ավտոմոբիլներ և տասնյակ հազարավոր գյուղատնտեսական դանաղան բարդ մեքենաներ։

Խորհրդային իշխանության ժամանակ աճել ե Սնդդրկովկասի ժողովուրդների կուլտուրան։ Լիոյին վերացվում ե անդրադիտությունը, ստեղծված ե բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանց, գիտա-հետազոտական ինստիտուտների ցանց, զարդանում են զբականությունն ու արվեստը։

Ստեղծելով և ամրացնելով Անդրֆեղերացիան, Անդրդրկովկասի հանրապետությունների բոլշևիկներն ու աշխատավորները խսպառ վերացրին Անդրդրկովկասի ժողովուրդների միջև յեղած աղքային յերկապառակության արտահայտությունները և անխորսակելի բարեկամություն հաստատեցին նրանց միջև։

Ընկեր Մոլոտովը 1935 թվականի գեկտեմբերին Խորհրդային Հայաստանի աշխատավորության պատվիրակության ընդունելության ժամանակ ունեցած իր յելույթում հետևյալն եր ասում Անդրդրկովկասի ժողովուրդների բարեկամության մասին։

«Մենք հասանք այն բանին, վոր բաղմազգի Անդրդրկովկասում, վորոնել յերկար ժամանակի ընթացքում դաժան պայքար եր տեղի ունենում տարբեր ազգությունների աշխատավորների միջև, մի պայքար, վորն ամեն կերպ հրահրում եյին կապիտալիստներն ու ցարական սպասավորները, — այժմ այդ պայքարը վերջնականապես վերացված ե և այդ պայքարի փոխարեն ծաղկում ե Անդրդրկովկասի բոլոր աշխատավորների համերաշխ կյանքը»։

Մեծ և ու անխորսակելի վրաստանի, հայաստանի Անդրդրեջանի աշխատավոր ժողովրդի բարեկամությունը միմյանց հետ, մեծ և ու ամուռ Անդրդրկովկասի աշխատավոր ժողովուրդների բարեկամությունը Խորհրդացային Միության բոլոր ժողովուրդների աշխատավորների հետ։

Ստեղծելով ու ամրացնելով Անդրֆեղերացիան՝ Անդրդրկովկասի հանրապետությունների բոլշևիկներն ու աշխատավորները միանական ջանքերով վերջնականապես ջախճախեցին մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների հարկածեղափոխական կուսակցությունները և վերացրին կապիտալիստական վերջին դասակարգը՝ կուլակությունը։

Մեր կուսակցության հաղթությունը սոցիալիստական շինարարության մեջ, կոլտնտեսային կարգերի ամրացումը գյուղում՝ արմատագես վերացրին մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների հակառակության գործունեյության հողը։

Սոցիալիստական շինարարության հաղթանակի համար, կուսակցության գլխավոր գծի ու նրա աղջային քաղաքականության համար մզվող պայքարում Անդր-

կովկասի հանրապետություններում աճեցին ու դաստիարակվեցին աշխատղների կադրեր։ Աճեցին կուտական, տնտեսական, խորհրդային զեկավարների կադրեր։ Աճեցին գիտական-տեխնիկական ինտելիգենցիայի ու մեր հայրենիքի նշանավոր մարդկանց՝ ստախանովականների կադրեր, վորոնք որինակելի աշխատանքի որինակներ են տալիս սոցիալիստական շինարարության ամենատարբեր բնագալառուներում։ Այդ կադրերի ածումն Անդրկովկասի հանրապետություններում՝ մեր կուտակցության ամենամեծ հաջողություններից մեկն ե հանգիստանում։

Այս բոլոր հոկայական հաջողությունները, վոր ձեռք են բերել Անդրկովկասի հանրապետությունները, պայմաններ ստեղծեցին Անդրֆեդերացիայի վերացման համար։ Այս և խորհրդային պետության դիալեկտիկան գարդացման պրոցեսի որինաշափությունը։

Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական-եկոնոմիկ փոխհարաբերություններն այսոր արգեն չեն սահմանափակվում միայն Անդրֆեդերացիայի ներսի հարաբերություններով։

Անդրկովկասի հանրապետությունները՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը, իրենց աճող տնտեսության պայմանների չնորհիվ, այժմ տնտեսական լայն կապեր ունեն ամբողջ Խորհրդային Միության շատ յերկրագա-սերի ու հանրապետությունների հետ։

Բնդարձակիվել ու ամրացել են նաև Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի կապերն անմիջականորեն և Ս-Հ մյուս հանրապետությունների հետ։

Խորհրդային Միության մյուս հանրապետությունների ու յերկրամասերի հետ Անդրֆեդերացիայի հան-

րապետությունների ունեցած այդ ուղղակի փոխհարաբերությունների զարգացումն այդ հանրապետություններից յուրաքանչյուրի համար միանգամայն նոր դրություն ստեղծեց Խորհրդային Միության ախտամում։

Սոցիալիստական շնարարության հաղթանակներն աղջային հանրապետություններում այժմ նոր խնդիրներ են դնում կուտակցության առջև աղջային հարցի բնագավառում։ Աղջային հանրապետություններում ստեղծված ե արդյունաբերություն, այդ արդյունաբերության մեջ աճել են բանվորների կադրեր։ Անդրկովկասում մինչև հեղափոխությունն արդյունաբերությունը ու գյուղատնտեսության մեջ յեղել է 67·200 բանվոր, իսկ առ 1-ը հանգարի 1936 թվականի՝ 312·200 մարդ։ Աղջային հանրապետությունների գյուղացիությունն այսոր կոլտնտեսային գյուղացիություն է, նվիրված կոլտնտեսային կարգերին և խորհրդային ենանությանը։

Այստեղից ել՝ կուտակցության աղջային քաղաքականության խնդիրն ե ել ամելի ամրացնել աղջային նիշտ փոխհարաբերությունները Խորհրդային Միության աշխատավորների (բանվորների, գյուղացիության ու ինտելիգենցիայի) միջև, վորոնք միավորվել ու կազմել են մեծ Խորհրդային Միության մեջ մանզ հանրապետություններ և արգեն հասել են վո՛չ միայն իրավական, այլև տնտեսական հավասարության։

1931 թվականի հոկտեմբերի 31-ին Համեկ(բ)կ Կենտկոմը նշեց, վոր Համեկ(բ)կ Անդրյերկոմն Անդրֆեդերացիայի տնտեսական ու կուտառարական շինարարության զեկավարման գործում թույլ ե տվել չափից դուրս կենտրոնացում, վորը մի շաբք ճյուղերում

Հասցըել ե հանրապետական մարմինների դիմադրկման :

Հենց այդ վորոշմամբ Համկ(բ)Կ կենտկոմը պարտավորեցրեց Անդրկովկասի կուսակցական կազմակերպություններին՝ ապահովել Անդրֆեղերացիայի մեջ մտնող աղքային հանրապետությունների լայն ինքնագործունեցրան ու տնտեսական նախաձեռնության ծառալումը :

Աղքային հանրապետությունների ինքնագործունեցրուն ու տնտեսական նախաձեռնությունը դարպայնելու վերաբերյալ Համկ(բ)Կ կենտկոմի այդ ցուցումների կատարումը պայմաններ նախապատճառեց Անդրֆեղերացիայի վերացման հարցը դնելու համար :

Անդրկովկասյան ծեղերացիան խոչոր գեր ե խաղացել սոցիալիստական շինարարության հաղթանակի համար Անդրկովկասի հանրապետությունների մղած պայքարում : Նա լիովին լուծեց իր առջև դրված բոլոր ինդիբները, ուստի և Անդրֆեղերացիայի՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախադիմի մեջ նշված վերացումը միանդամայն ճիշտ ու ժամանակին մի քայլ ե հանդիսանում. խորհրդային սոցիալիստական պետության հետագա շինարարության հանապարհին :

* * *

Նախկին նացիոնալուկոնիստներից վոմանք, վորոնք իր ժամանակին պայքարում ելին Անդրֆեղերացիայի առեղծման դեմ, այժմ չեն զլանա գաղտազողի շաղակրատել, թե իրենք, նացիոնալուկոնիստներն, իրը թե իրավացի ելին, թե Անդրֆեղերացիայի վերացման առաջարկը, վոր հավանության ե արժանացել Համկ(բ)Կ կենտկոմի պլենումի և ԽՍՀՄ-ի կենտդործ-

կոմի նախագահության կողմից, իրենց նախկին իրավացիության հաստատումն ե հանդիսանում :

Կարիք կա արդյոք խոսելու նախկին նացիոնալուկոնիստների նմանորինակ շաղակրատության ամբողջ անհեթեթության ու հակակուսակցականության մասին :

Ինչպես յերեւում ե, աղքային հանրապետություններում տեղի ունեցած սոցիալիստական շինարարության մեծագույն հաղթանակների բոլոր 15 տարիներըն այդ մարդկանց կողքուն են անցել, և նրանք մինչև այժմ չեն հասկանում վո՛չ իրենց հին սխանները, վո՛չ ել այն, ինչ կատարվում ե այսոր Խորհրդային Միության մեջ: Նրանք սխալվում ելին ա՛յն ժամանակ, նրանք սխալվում են նաև ա՛յժմ :

Տարակույս չկա, վոր մեծագետական տարրերը նույնպես կիորդեն արտելք կատարել Խորհրդային Միության նոր Սահմանադրության վերաբերյալ Համկ(բ)Կ կենտկոմի պլենումի այս համաշխարհային պատմական վորոշումների դեմ:

Տարակույս չկա, վոր իրենց հակահեղափոխական նպատակների համար նոր Սահմանադրությունն սպագործելու փորձեր կանեն նաև խորհրդային իշխանության բոլոր վոխերիմ թշնամիները, առաջին հերթին արոցկիստական-զինովյեվական ջախջախված խմբակների մնացորդներից :

Մեր առջև խնդիր ե ծառացած՝ վերջականապես վոչնչացնել, յերկրի յերեսից ջնջել սոցիալիստական շինարարության թշնամիներին, ինչպիսի դիմակի տակ ել թագնված լինեն նրանք, և այդ հիման վրա հասնել մեծ սոցիալիստական հայրենիքի հզորության ու

Առաջըդային Միության ժողովուրդների բարեկամության ել ամելի ամրացման:

Վրաստանի, Աղբեջանի և Հայաստանի բոլշևիկներն ու բոլոր աշխատավորները հակայական խանդավառությամբ դիմավորեցին ՀամԿ(բ)կ կենտկոմի պետությամբ վորոշումները ստալինյան Սահմանադրության մասին:

Վրաստանի, Աղբեջանի ու Հայաստանի բոլշևիկները, վորոնք հակայական աշխատանք են կատարել Անդրկովկասի հանրապետություններում խորհրդային իշխանությունն ամրացնելու և այդ հանրապետություններում սոցիալիստական շինարարությունը ծավալելու ուղղությամբ, վորոնք պայքար են մղել հակահեղափոխական նացիոնալիստական կոսակցությունների - դեմ, արոցկիզմի ու նացիոնալ-ռոկլոնիզմի դեմ, վորոնք մեծ հաջողությունների յեն հասել մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության գործում, Անդրկովկասի ժողովուրդների միջև անխորատակելի բարեկամությունն ամրացնելու գործում, — հետազյում ևս անհաշտ ու անշեղ կերպով կպայքարեն Լենինի-Ստալինի մեծ գործի համար:

Խմբ. Նշ. Մակենց, թարգմ. Լ. Արովյան, սրբ. Վ. Զիգենյան,
Տեխն. խմբ. Վ. Մանուկյան


Գրավության թիվ C-1079, պատճ. 232, հ.ատ. № 383, տիրաժ 10.000,

Ինդեքս Ա-84
PK

Հանձնված եւ արտադրության 28/VI 1936 թ. ստորագրված եւ^{առաջարկության 28/VII 1936 թ.}

Կիբեռ ՀՀ նույն.

Հայկունիատի տեղական նշանական օրենսդիրական № 27



ՀՀ Ազգային գրադարան



NL0207738

513

34.651

ԳԻՒԾ 20 ԿՈՊ.



Լ. БЕРИЯ
НОВАЯ КОНСТИТУЦИЯ СССР
и
ЗАКАВКАЗСКАЯ ФЕДЕРАЦИЯ
Армпартиздат, Эривань